

ԿԱՐԾԻՔ

Ալբերտ Մարատի Չուրաբյանի «Անձի մասնագիտական անվտանգության հոգեբանական նախադրյալների ապահովումը SS կիրառման պայմաններում» թեմայով ՄԹ.00.01. «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ժամանակակից աշխարհը բնութագրվում է ոչ միայն հնացած, անպետք մասնագիտությունների հաղթահարումով, այլև նոր մասնագիտությունների ստեղծումով, որոնք այս կամ այն կերպ հաշվի են առնում տեղեկատվական տեխնոլոգիաների բացահայտումները և ներառում դրանք մասնագիտական խնդիրները լուծելու գործում: Ստեղծված պայմանները թելադրում են նոր մոտեցումներ, ինչին պետք է հարմարվի արդի աշխարհում ապրող մարդը՝ ռեսուրսներ ներդնելով մասնագիտական աշխատանքում առաջ եկած խնդիրները հաղթահարելու համար:

COVID-19 համավարակով պայմանավորված, SS ոլորտի կարևորությունն առավել հրատապ և նշանակալի դարձավ ու նոր մարտահրավերներ նետեց տարբեր ոլորտներում աշխատող անձանց. համապատասխան գիտելիքների իմացություն, հարմարում առցանց աշխատանքի, աշխատանքային պայմանների փոփոխություն և այլն: Այս իրավիճակը (COVID-19), ինչը մարդու հոգեբանական ադապտացիայի ժամանակի տեսանկյունից կարող ենք համարել «կայծակնային», իսկական մարտահրավեր էր մասնագետների համար, որոնք պետք է արագ կերպով անցում կատարեին առցանց «կյանքի» և նոր գործիքների միջոցով լուծեին իրենց առջև դրված խնդիրները:

Ներկայումս հաղթահարված համարելով COVID-19 համավարակը, այդպես էլ շատ մասնագիտություններ այլևս ամբողջությամբ չվերադարձան նախկին ընթացակարգին (հաճախ կիրառվում է հիբրիդային մոտեցում) և շարունակեցին օգտվել SS ոլորտի ընձեռած հնարավորություններից:

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակի առանձնահատկությունները, անհրաժեշտ է դառնում ուշադրություն դարձնել անձի հոգեբանական անվտանգությանը՝ անցկացնելով

համապատասխան հետազոտություններ և անհրաժեշտության դեպքում հրատապ լուծումներ գտնել: Վերոնշյալից (և աշխատանքում բերված այլ մոտեցումներից) ելնելով, հիմնավորված և կարևոր ենք համարում ստենախոսության թեմայի ընտրությունը:

Ստենախոսության ներածական մասում հաջորդաբար ներկայացվում են հետազոտվող խնդրի գիտական մշակվածությունը, հետազոտության մեթոդաբանական հիմքերը, աշխատանքի նպատակը, խնդիրները (թվով 5), հետազոտության վարկածը, հետազոտության օբյեկտը և առարկան, հետազոտության համակազմը և կիրառված մեթոդները, պաշտպանության դրված դրույթները (թվով 4), աշխատանքի գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների հավաստիությունը և հուսալիությունը ապահովող հիմքերը, աշխատանքի կառուցվածքը:

Ստենախոսության սեղմագիրն արտահայտում է աշխատանքի հիմնական դրույթները և բովանդակությունը:

Այդուհանդերձ պետք է նշենք, որ աշխատանքը գերծ չէր թերություններից և բացթողումներից, որոնց մասին կխոսենք ներքևում և կցանկանանք դրանց վերաբերյալ լսել ստենախոս Ալբերտ Ջուրաբյանի մեկնաբանությունները.

1. Ստենախոսությունում տարբեր հեղինակների աշխատանքներին կատարված հղումները (որոնք բերված են էջերի ներքևի հատվածում), թվային ցուցիչներով չեն համապատասխանում գրականության ցանկում բերվածի հետ:

2. Ստենախոսությունում հանդիպում են տարբեր հեղինակների կողմից արված ուղղակի մեջբերումներ, ինչը պետք է ներկայացվեր չակերտների միջոցով («»), սակայն դա չի արվել. նախադասության վերջում միայն համարակալվել է հեղինակի աշխատանքին հղում կատարելով: Ներքոնշյալները ուղղակի մեջբերումներ են, սակայն չակերտների մեջ չեն ներառվել, մասնավորապես՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաների յուրահատկություն է այն, որ նման համակարգերի համար և՛ առարկան, և՛ արդյունքը տեղեկատվություն է, իսկ աշխատանքային գործիքը՝ հաշվիչ տեխնիկայի միջոցները և կապը», էջ 53: ...«տեղեկատվական տեխնոլոգիաները՝ համակարգչային հիմքի վրա, մասնավորապես, ծրագրային ապահովման, սպասարկման կամ կառավարման տեղեկատվական համակարգեր, ինչպես նաև բոլոր ձևաչափերով տեղեկատվություն են, ներառյալ՝

տվյալներ, պատկերներ (շարժական, անշարժ) ստեղծելու, փոխակերպելու, պահպանելու, պաշտպանելու, մշակելու, փոխանցելու և անվտանգ հայթայթելու համար օգտագործվող տեխնոլոգիաների բոլոր տեսակներն են» էջ 56 և համապատասխանաբար էջ՝ 56, 64:

3. Հետազոտության ընտրանքը կազմել են 20-35, 36-60, 61-75 տարիքային խմբերը, որոնցում ներառված են եղել 200 անձ: Այսպիսի բաժանումը ենթադրում էր, որ այն որոշակի տրամաբանությունից է բխում (տարիքով պայմանավորված առանձնահատկություններ և այլն) և այն պետք է արտացոլվեր հետազոտության ընթացքում և արդյունքներում: Սակայն հետազոտության մեջ մենք չհանդիպեցինք տարիքային խմբով պայմանավորված վերլուծությունների, ինչը, մեր կարծիքով, կարող էր նշանակալի ցուցիչ լինել հետազոտության արդյունքների վերլուծության ժամանակ:

4. Հետազոտության ժամանակ հաշվի չեն առնվել (հետազոտության մեջ և եզրակացություններում մենք չգտանք նման տվյալներ, էջ՝ 89-125) սեռային տարբերություններով պայմանավորված վերլուծությունները (ընտրակազմում ևս սեռային տարբերությունների մասին նշված չէր), ինչը, մեր կարծիքով, կարող էր նշանակալի լինել տվյալ հետազոտության համար:

5. Հետազոտության ընտրանքում չի նշվել և, հետևաբար, հետազոտության ժամանակ հաշվի չեն առնվել հետազոտվողների աշխատանքային փորձը (հետազոտության մեջ և եզրակացություններում մենք չգտանք նման տվյալներ, էջ՝ 89-125), ինչը, մեր կարծիքով, կարող էր տվյալ հետազոտության արդյունքների համար խիստ նշանակալի և կարևոր լինել, քանի որ աշխատանքն առնչվում էր մասնագիտական անվտանգության հոգեբանական նախադրյալների ապահովման խնդրին:

Այդուհանդերձ, վերոնշյալ (3, 4, 5 կետերը) դիտողություններից ելնելով, ցանկանում ենք լսել ատենախոս Ալբերտ Ջուրաբյանի մեկնաբանությունները և հիմնավորումները, ինչը, մեր կարծիքով, տվյալ հետազոտության համար կարևոր և նշանակալի դեր կարող էր ունենալ.

Ինչու՞ հետազոտության ժամանակ հաշվի չեն առնվել (հետազոտության մեջ արտացոլված չեն) մեր կողմից բերված գործոնները (տարիք, սեռ, աշխատանքային փորձ) և, եթե հաշվի են առնվել, ապա արդյո՞ք դրանք (նշված գործոնները) այնքան աննշան էին,

որ կարելի էր դրանց մասին չխոսել և անտեսել, մասնավորապես. արդյո՞ք տարիքը, սեռը և աշխատանքային փորձը չէին կարող նշանակալի և որոշիչ դեր ունենալ, տվյալ հետազոտության շրջանակներում, հուզական այրման, մասնագիտական գործունեության դրդապատճառների, հոգեկան այրման և կատարված այլ հետազոտությունների ժամանակ:

Կարծում ենք, մեր կողմից բերված գործոնների (տարիք, սեռ, աշխատանքային փորձ) ներառումը, և հետևաբար դրանց հետազոտումն ու վերլուծությունը աշխատանքում, թույլ կտար ստացված հետազոտության տվյալները համարել առավել ամբողջական և հավաստի:

Եզրակացություն

1. Հիմնավորված ենք համարում ատենախոսության թեմայի արդիականությունը և անհրաժեշտությունը, աշխատանքում կիրառված տարատեսակ մեթոդներն ու համեմատական վերլուծությունները:

2. Աշխատանքում նշված թերությունները (հինգ կետում բերված, մասնավորապես դրանցից երեքը՝ 3,4,5) համարում ենք նշանակալի և ակնկալում ենք ատենախոսի կողմից սպառիչ պատասխաններ և հիմնավորումներ:

Այդքանով հանդերձ գտնում ենք, որ Ալբերտ Մարատի Զուրաբյանի «Անձի մասնագիտական անվտանգության հոգեբանական նախադրյալների ապահովումը SS կիրառման պայմաններում» թեմայով ԺԹ.00.01. «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող ՀՀ կառավարության 1997թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ի 7 կետի պահանջներին, իսկ հեղինակը, նշված դիտողություններին (3,4,5) գիտականորեն համոզիչ հիմնավորումներ տալու պարագայում, արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:



Հայկական Պետական Մանկավարժական
Համալսարանի փոխընդհանուր
Ս. Իսախրյան

Գ.Ս. Եսայանի ստորագրությունը հաստատում եմ

Պաշտոնական ընդդիմախոս՝  Գ.Ս. Եսայան (հ.գ.թ., ղոցենտ)

03. օգոստոս 2023թ.